«Երիտասարդ Պատմագետների Ասոցիացիա» ՀԿ – ի

EduArmenia (ԷդուԱրմենիա) նախաձեռնություն

Ուսուցիչների պետական պարտադիր վերապատրաստման դասընթաց **2023**

Հետազոտական աշխատանք

Թեմա՝ «Ինչպե՞ս արդյունավետ իրականացնել դասարանի կառավարումը հիմնական դպրոցում (3–9–րդ դասարաններ)»

Հետազոտող ուսուցիչ՝ Հայրապետյան Հերմինե

դպրոց՝ ք. Արմավիր, Վ. Բախշյանի անվան թիվ 2 հիմնական դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

★ Ներածություն.....էջ **3**

Գլուխ **1՝**

★ Նպատակը և խնդիրները.....էջ **6**

★ Ի՞նչ է դասարանի կառավարումը.....էջ **7**

★ ինչու՞ է մեզ պետք արդյունավետ դասարանի կառավարում.....էջ **7**

★ Ի՞նչ պետք է հաշվի առնել դասարանի կառավարման ընթացքում.....էջ **7**

Գլուխ **2՝**

★ Ի՞նչ լուծումներ կան՝ ռազմավարություն .....էջ **11**

★ Դասարանի կառավարման **3** ոճեր.....էջ **26**

★ Եզրակացություն.....էջ **28**

★ Օգտագործված գրականության ցանկ .....էջ **29**

Ներածություն

Սովորողների շրջանում 50 տարի տևած ուսումնասիրությունների ընթացքում կատարվել է շուրջ 11.000 հետազոտություն: Ուսումնասիրություններից պարզվել է, որ ուսման արդյունավետության վրա ազդում են 28 գործոններ, որոնցից ամենակարևորը դասարանի կառավարումն է: Միևնույն ժամանակ, դասարանի կառավարման նպատակը աշակերտների նկատմամբ լիակատար վերահսկողություն իրականացնելը չէ, այլ այնպիսի միջավայրի ստեղծումն է, որտեղ սովորողները կներգրավվեն դասապրոցեսին, ուսուցչի ուղղորդմամբ կիմանան, թե իրենցից ինչ է ակնկալվում և արդյունքում հաջողության կհասնեն, կկարողանան ճիշտ օգտագործել ժամանակը, համագործակցային ուսուցման ընթացքում ի ցույց կդնեն գիտելիքները՝ վերահսկելով իրենց վարքագիծը:

Ըստ Հ. Վոնգի՝ դասարանի կառավարումը այն ամենն է, ինչ անում է ուսուցիչը դասապրոցեսին: Նա ծրագրում է, թե ինչպես պետք է ինքն օգտագործի իրենց տարածքը, ժամանակը, նյութերը, որպեսզի ուսումն ու ուսուցումը հաջողությամբ իրականացնի:

Վերջին տարիներին նկատել եմ, որ դասարանի կառավարումը հատկապես դժվարացել է 5–9–րդ դասարաններում : Դա կարող է արտահայտվել և՛ բազմափորձ և՛ նորեկ ուսուցիչների մոտ, եթե նրանք կատարում են հետևյալ սխալները

- ★ մտնում են դասարան բոլորովին անպատրաստ՝ առանց օրվա դասապլանի,
- ★ խոսում են միալար և հոգնեցնող ձայնով և չունեն սովորողի պատասխանը լսելու համբերություն
- ★ չկարողանալով ճիշտ տնօրինել ժամանակը՝ ստեղծում են խառն իրավիճակ, որից արագ օգտվում են երեխաները
- ★ վարում են միապաղաղ և ուսուցչակենտրոն դաս, որը դառնում է ձանձրալի 21–րդ դարի սովորողի համար
- ★ չեն կարողանում խմբային աշխատանքներ կազմակերպել կամ անում են դրանք ոչ այնքան էլ ճիշտ և անարդյունավետ
- ★ առաջնահերթությունը տալիս են միայն գերազանց պատասխաններ տվող սովորողներին՝ անուշադրության մատնելով մյուսներին:

Նմանատիպ սխալ դասավարումը կամ ոչ արդյունավետ դասի կառավարումը կարող է հանգեցնել աղմուկի, շատախոսության, նյութի կիսատ հաղորդման, ցածր առաջադիմության, դասը խանգարող վարքագծի արտահայտման, և ուսուցչի և աշակերտների կողմից լարվածության և նույնիսկ թյուրըմբռնման:

Քաջ գիտակցելով նման խնդիրների առկայությունը՝ իմ հետազոտական աշխատանքում առաջարկում եմ դրանց վերհանումը, քննումը՝ փորձելով տալ հնարավոր լուծումներ:

Քանի էր Հ. Վոնգի այս տեսությունը շատ են հետազոտել և ուսումնասիրել, ես կփորձեմ ներկայացնել այլ առաջավոր փորձերի վերլուծությունը, իհարկե առաջնորդվելով նաև երկարամյա իմ փորձով:

Վերջին ամիսների ընթացքում, ինձ հիանալի հնարավորություն տրվեց մասնակցել մի քանի վերապատրաստումների, որոնց թվում ԵՊԱՀԿ-ի EduArmenia (էդուԱրմենիա) նախաձեռնության «Նախագծային ուսումնառության կազմակերպում և կառավարում»(ՆՈՒԿԿ) դասընթացը և Բրիտանական խորհրդի *Classroom management for primary* , *Online skills for remote teaching, Teaching Speaking* առցանց վերապատրաստումները, *TESOL Methodology Summer 2023* առցանց դասընթացը, կազմակերպված Online Professional English Network (OPEN)–ի կողմից: Այդ ընթացքում ձեռք բերված գիտելիքը և փորձառությունը, ինչպես նաև հմտությունները և կարողունակությունները զինեցին ինձ կրթական միջավայրի նորօրյա գործիքներով, որոնց կիրառումը կներկայացնեմ և՛ այս աշխատանքում, հատկապես որպես Օգտագործված գրականության ցանկ բաժնում և՛ հետագա իմ դասավանդման ընթացքում:

Վարկած՝

Ուսումնական տարին պետք է սկսել դասարանի կառավարումից: Դասարանի կառավարման համար կարևոր է ուսուցչի կողմից կանոնների սահմանումը ուսումնական տարվա սկզբից: Կանոնները սահմանելիս հիշել, որ դրանք պետք է լինեն դրական և պարզ ձևակերպմամբ, ինչպես նաև լինեն իրագործելի: Միաժամանակ, ես կարծում եմ, որ չպետք է անտեսենք սովորողների ուսումնառության և մասնակցության անհատական ոճերը, դասարանի կահավորվածությունը, ուսումնաօժանդակ նյութերի հագեցվածությունը, անհատական, զույգերով և խմբային աշխատանքների ճիշտ իրականացումը: Այս և նմանատիպ շատ կարևոր հարցեր բավականին մանրամասն կքննարկվեն այս հետազոտական աշխատանքի մեջ՝ վեր հանելով դասարանի կառավարման շատ կարևոր այս խնդիրը, առաջարկելով ոչ միայն վարկած այլև հետաքրքիր և արդյունավետ լուծումներ:

Գլուխ **1**՝

Նպատակը և խնդիրները

Այս հետազոտական աշխատանքի նպատակն է՝

1. Ուսուցչին գիտել ժամանակակից մանկավարժական գործընթացն արդյունավետ կազմակերպելու համար անհրաժեշտ գիտելիքով
2. Դասարանի կառավարման խնդիրների վերհանման և լուծումների առաջարկման միջոցով ուսումնական գործընթացի արդյունավետությանը նպաստելը
3. Առաջարկել դասարանի կառավարման արդյունավետ ռազմավարություն
4. Ծանոթացնել առաջատար տարբեր փորձերի հետ

Դասարանի կառավարման մասին խոսելիս պետք է նախ և առաջ պատասխանել հետևյալ հարցերին՝

★ Ի՞նչ է դասարանի կառավարումը

★ Ինչու՞ է մեզ պետք արդյունավետ դասարանի կառավարում

★ Ի՞նչ պետք է հաշվի առնել դասարանի կառավարման ընթացքում

1. Ի՞նչ է դասարանի կառավարումը

Դասարանի կառավարումը ուսուցչից պահանջում է տարբեր հմտություններ և կարողություններ՝ ստեղծելով բարձր կատարողականություն ունեցող կրթական միջավայր: Ավանդական դասարաններում գերիշխում էր հանգիստ և անաղմուկ մի միջավայր, որտեղ հիմնականում ուսուցիչն էր հարցեր տալիս և ստանում պատասխաններ: Մեր օրերում որոշակի չափով դերերը փոխվել են՝ երեխաները դարձել են ավելի հարցասեր և հետաքրքրասեր:

Աշխատելով դպրոցում արդեն 23 տարի և ձեռք բերելով բավականին փորձ՝ կարող եմ վստահաբար փաստել,որ դասարանի կառավարումը ամենակարևոր հարցերից մեկն է և ստացված դասի գրավականը:

Իսկ թե ինչպիսի՞ կետեր պետք է հաշվի առնել դասարանի արդյունավետ կառավարման համար, առաջարկում եմ կարդալ գլուխ 2 ՝ «Դասարանի կառավարման համար կարևոր կետեր» վերնագրի ներքո:

2. Ինչու՞ է մեզ պետք արդյունավետ դասարանի կառավարում

Վերը նշված կետերը հաշվի առնելով՝ ստեղծում ենք արդյունավետ և դրական աշխատանքային միջավայր և հասնում տվյալ դասի համար դրված մեր նպատակին: Ինչպես նաև պետք է հաշվի առնել այն հանգամանքը , որ նման միջավայրից օգտվում է նաև ուսուցիչը, այսինքն ավելի քիչ է աշխատանքային լարվածություն զգում և հանույթով է աշխատում:

3. Ի՞նչ պետք է հաշվի առնել դասարանի կառավարման ընթացքում՝

- Կանոնների սահմանումը

Դասարանի կառավարման համար կարևոր է ուսուցչի կողմից կանոնների սահմանումը ուսումնական տարվա սկզբից: Կանոնները սահմանելիս հիշել, որ դրանք պետք է լինեն դրական և պարզ ձևակերպմամբ ինչպես նաև լինեն իրագործելի: Կարելի է նաև դա անել սովորողների անմիջական և ակտիվ մասնակցությամբ: Մի քանի տարբերակներ առաջարկում եմ գլուխ երկրորդում «Կանոնների սահմանումը » վերնագրի ներքո:

- Հետազոտել տվյալ տարիքային խմբի կարիքները և տվյալ դասագրքի համապատասխանությունը:

Իմ կարծիքով պետք է ոչ միայն աշխատել դասագրքով, դասընթացին համապատասխան առարկայի դասագրքով ապահովվածությունն ունենալ, այլև լրացուցիչ նյութերով դասը ավելի հետաքրքիր դարձնել:

Դասագիրքը պարտադիր պայման է և ծառայում է որպես հանրակրթության չափորոշչով սահմանված գիտելիքի փոխանցման հավաստի աղբյուր՝ ապահովելով հստակ ընթացակարգ և ծրագրային նյութի

առաջընթացի երաշխիք: Դրանք կազմված են չափորոշիչներով և հստակ ժամանակացույցով: Այսուհանդերձ, ելնելով իմ աշխատանքային տարիների փորձից և հետևելով ոլորտում առաջատար մասնագետների խորհրդին՝ կարելի է եզրակացնել, որ պետք չէ կուրորեն հետևել դասագրքերին , եթե դրանք այնքան էլ չեն համապատասխանում տվյալ դասարանի երեխաների սովորելու կարիքների բավարարմանը: Ի՞նչ կարելի է անել այս ուղղությամբ, խնդրի լուծումը տալիս եմ գլուխ երկրորդում « Ուսումնաուժանդակ նյութեր » վերնագրի ներքո:

- Դասարանի տարածքը և սովորողների քանակը

  Ուսուցիչը՝ Սառա Գեպը (Sarah Gapp), շրջելով դասարանում , ստեղծում է տարածքային փոխհարաբերություն: Կարմիրով նշվում է այն տարածքը, որտեղ այդ պահին ինքն ավելի հասանելի է երեխաներին , և նրանք կարող են ուսուցչին հարցեր ուղղել: Դեղին շրջանով տարածքում ավելի քիչ վերահսկվող տարածք է, և նմանապես կանաչ տարածքը, որտեղ երեխաները ավելի ազատ են: Այս ամենով հանդերձ նա չի կանգնում մի տեղում, անընդհատ շարժվելով փոխում է իր հասանելիության և երեխաներին վերահսկելու տարածքը, դա կատարվում է դանդաղ և նպատակային: (տես՝ [Teacher positioning in the classroom](#) **British Council TeachingEnglish** , [Utilizing Proximity to Manage Classroom Discipline and Behavior](#) **)**

- Հետազոտել սովորողների ուսումնառության անհատական ոճերը՝ տեսողական, զգայական, ունկնդրելու**(visual, kinesthetic, audio)**:

  Ուսումնառությունը խրախուսելու համար անհրաժեշտ է սովորելու ընթացքում հնարավորինս շատ օգտվել զգայարաններից, պետք է միշտ փորձել զուգորդել պատմելը ցուցադրման հետ,

յուրաքանչյուր դասի համար նախապատրաստել տեսողական և լսողական օժանդակ նյութեր: Ստուգել՝ արդյո՞ք նյութերը լավ են լսվում կամ երևում սարքերի կամ գրատախտակի վրա: Գլուխ երկրորդում առաջարկում եմ մի քանի օգտակար կետեր, որոնք դասարանի կառավարումը կդարձնեն ավելի դյուրին և առավել ևս արդյունավետ՝ հաշվի առնելով ուսումնառության և մասնակցության անհատական ոճերը:

- Ո՞ր տարիքային խմբում ինչպիսի խաղերի միջոցով կարելի է անցկացնել դասը ավելի հետաքրքիր և ինչպես կառավարել ընթացքը:

Վերջին տարիներին, հատկապես ֆովիդի համաճարակի շրջանում և հանկարցահաս պատերազմից հետո, Հայաստանում սովորողների մոտ սկսել է նվազել միմյանց հետ համագործակցելու և շփվելու կարողունակությունը:
Նրանք ակնհայտորեն դարձել են ավելի մեկուսացած և ինքնամփոփ; Իմ կարծիքով 3–9–րդ դասարանի երեխաներին պետք է անպայմանորեն ներգրավել տարբեր խաղերի և վարժանքների մեջ՝ հաշվի առնելով տարիքային համապատասխանությունը: Նպատակային խաղերի ընթացքում երեխաների մոտ ձևավորվում է ոչ միայն միմյանց հետ ակտիվ և համագործակցային շփում, այլև ապահովվում է միջառարկայական կապ, օրինակ մաթեմատիկա, ճկարչություն, ֆիզիկական ակտիվություն և իհարկե քննադատական մտածողություն:Իրենց մտքերն արտահայտելով և հասակակիցների հետ շփվելով խաղերի և խմբային աշխատանքների ժամանակ՝ երեխաները ամուր կապեր և հարաբերություններ են ստեղծում, մտքեր փոխանակում միմյանց հետ:

- «Աղմկոտ դասարան» հասկացության ըմբռնումը երեխաների, ծնողների և դպրոցի կողմից: Երեխաները պետք է ակտիվորեն ներգրավված լինեն դասապրոցեսում, բայց երբեմն դա դառնում է բավականին աղմկոտ , և սխալ է ընմբռնվում հարակից դասարանների ուսուցիչների կամ միջանցքում ներկա ծնողների կողմից: Ի՞նչպես դարձնել դասարանի աշխատանքային «աղմուկը» կառավարելի. լուծումը տրված է երկրորդ գլխում՝ « Դասարանի կառավարման համար կարևոր կետեր»

- Անհատական–խմբային–ամբողջական դասարանային աշխատանքի կառավարումը:
  Անհատական–խմբային–ամբողջական դասարանային աշխատանքների հստակ տարաբաժանում պետք է լինի: Նույնիսկ տարրական դասարաններում, այսինքն վաղ տարիքից երեխաները մեծ հաճույքով կարող են ներգրավվել զույգերով կամ խմբային աշխատանքներում: Կան մի շարք

առավելություններ, սակայն չեն բացառվում նաև «ծուղակները»: Ինչ հնարավորություն է տալիս խմբային աշխատանքը, ինչպե՞ս ճիշտ բաժանել խմբերի և խուսափել «ծուղակներից»՝ գլուխ երկրորդում կգտնեք առաջարկվող հնարավոր տարբերակներ:

Գլուխ **2**՝

4. Ի՞նչ լուծումներ կան՝

Խնդրի լուծումը և առաջարկվող ռազմավարությունը

Դասարանի կառավարման խնդիրը լուծելու և ուսման որակը բարձրացնելու համար ուսուցիչը պետք է ուղղորդվի հետևյալ ռազմավարությամբ՝

«Դասարանի կառավարման համար կարևոր կետեր»

Դասարանի լավ կառավարման համար պետք է հաշվի առնել հետևյալ կետերը՝

- ստեղծել կահավորված և անհրաժեշտ պարագաներով հագեցած աշխատանքային միջավայր և՛ ուսուցչի և՛ սովորողի համար
- նախատեսված դասի համար ունենալ հստակ պլան

Դասարանի արդյունավետ կառավարման հիմնասյուններից է հստակ պլանավորումը:Պարզ և մատչելի/իրատեսական ակնկալիքների ապահովումը ստեղծում է արդյունավետ կրթական միջավայր սովորողների համար: Միաժամանակ պետք է ունենալ դասի ճկուն պլան, անհրաժեշտության դեպքում փոփոխության ենթարկելու համար: Առաջարկում եմ մի քանի տարբերակներ:

տես՝ Դասի պլանավորում, սահիկ 26,27, Օրինակելի դասապլան 2023–24, Դասի պլան EduArmenia 2023

- հնարավորին չափ նվազեցնել խանգարող և ոչ աշխատանքային ներդասարանական աղմուկը

Նախ պետք է տարբերել ուսուցչի վերահսկողությունից դուրս եկած աղմկոտ դասարանը աշխույժ և միայն անգլերենով շփվող , թեկուզև մի քիչ աղմկոտ դասարանից: Ուսուցիչը պետք է շրջի ավելի աղմկոտ մասերում՝ կարգավորելով և օգնելով անհատական, խմբային կամ զույգերով աշխատանքները: Անպայման պետք է տարբեր խաղերում և ընթացակարգերում կամ վարժանքներում ներգրավել երեխաներին՝ հաշվի առնելով նաև ԿԱՊԿՈՒ առանձնահատկություններ ունեցող երեխաների կարիքները: Շատ կարևոր է ներգրավել տարատեսակ կարողունակություններ ունեցող սովորողներին, ինչպես նաև ԿԱՊԿՈՒ(կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող) երեխաներին: Փոխելով այդ վարժանքների տեսակները և վերահսկելով դասարանը՝ համեմատաբար ավելի քիչ աղմուկ կլինի:

Վարժանքների օրինակներ՝ (տես՝ **Understanding activities and classroom space for primary**)

եզրույթ	նկարագրություն
շրջան	Աջակցող աշխատանքային և մտերմիկ մթնոլորտ ստեղծելով՝ «Շրջան» մեթոդը թույլ է տալիս սովորողներին նստել դեմ առ դեմ շրջանաձև և կատարել տարբեր քննարկումներ կամ փոխադարձ հարցադրումներ; Կարելի է կիրառել և՛ միջին և՛ բարձր դասարաններում:

երկարաժամկետ վարժանք	կարող է տրվել և՛ որպես դասի վերջի հանձնարարություն և՛ որպես տնային աշխատանք, երբ սովորողները հետազոտում են տվյալ նյութը և ավելի խորանալով թեմայի մեջ դարձնում են անհատական աշխատանք՝ հաջորդ դասին ավելի մանրամասն ներկայացնում տվյալ տնային աշխատանքի առանձին հատվածը խորությամբ ուսումնասիրված:
շփում–հարաբերություններ	Անգլերենի ուսուցման ընթացքում կարևոր է հստակ տարբերակել և առանձնացնել դասի տվյալ հատվածում ուսուցիչ–անհատ սովորող, ուսուցիչ– ամբողջ դասարան, սովորող–խումբ, ուսուցիչ–խումբ հարաբերությունները: Երբ հաստակ դերաբաշխում է եղել, և պարզ է աշխատանքի կամ վարժանքի պահանջը, ապա աղմուկը նույնպես նվազեցվում է և յուրաքանչյուրը իր գործով է զբաղված:
վարժանքներ ոգևորել–հանգստացնել **(Stirring-settling)**	Այս վարժանքները հաճախակի կարելի է օգտագործել տարբեր տարիքային խմբերում՝ըստ իրենց յուրահատկությունների: Օրինակ տարրական դասարաններում մեծ ոգևորվածությամբ են երեխաները երգում միաժամանակ կատարելով ֆիզիկական թեթև մարզանք , օրինակ “Head and shoulders “ երգում (տես՝ Head and Shoulders, 2013), երբ տեսանյութում երևում է հենասայլակի վրա նստած երեխան, որ նույնպես ներառվելով երգի և ակտիվ վարժանքի մեջ կատարում է երգը , միաժամանակ իր հնարավորությունների չափով նաև մասնակցում ֆիզիկական վարժանքին: Չպետք է այս դեպքում վախենալ աղմուկից, կարելի է միաժամանակ դասարանը պատրաստել այլ հանգիստ հանձնարարության՝ կատարելով ժամանակի ճիշտ տնօրինում:

- կարողանալ կառավարել ոչ միայն սովորողների վարքը, այլ նաև դասի ժամանակահատվածը, ճիշտ տնօրինել ժամանակը
- Սովորողների միջոցով կազմել դասի կառավարման կանոնները,

  Կանոնների սահմանումը

Երբ սովորողները իրենք են սահմանում իրենց դասարանի ներքին կանոնները, ապա մեծ պատասխանատվությամբ հետևում են դրանց. կանոնները պետք է լինեն ոչ ավել քան 10–15: Առաջին դասին ծանոթանալով ուսուցչի և առարկայական պահանջներին ուսումնական տարվա կտրվածքով՝ երեխաները

սկսում են սահմանել իրենց ներդասարանական կանոնները, և հնարավոր է նաև որ ստանձնեն այդ կանոնները ՏՀՏ գործիքներով պաստառի վերածման դերը և ստացված արդյունքը փակցնեն դասարանի պատին: Կարելի է նաև օնլայն խաղ– հարցում ներկայացման միջոցով կանոններ ստեղծել, քննարկել կամ քվեարկել, օրինակ՝

Կանոններ

Այնուհետև կբաժանվեն 5 խմբերի և յուրաքանչյուր խումբը կստանձնի որևէ կանոնի գրանցմանը արդեն անգլերենով, կամ օնլայն պաստառի տեսքով կամ իրենց ձեռքով , օրինակը ներկայացված է ստորև՝

- Իրականացնել համագործակցային ուսուցում, այսինքն դասին ներգրավել բոլոր աշակերտներին՝ ուսումնասիրելով նրանց ոչ միայն նախասիրությունների և հետաքրքրությունների շրջանակը կամ ուսումնառության ոճերը, այլ նաև վարքագծի կամ վարքի դրսևորման առանձնահատկությունները: Այլ կերպ ասած՝անպայման մենք պետք է բազմակողմանի ճանաչենք մեր սովորողներին:
  Ինչպես նշում է EduArmenia -ի 2022 թվականի համաժողովի խոսնակ Թալին Պրատը՝ « Վարքագիծը բնութագրվում է 3 բաղադրիչով, դրանք են Նախադեպը/Միջադեպը, Վարքագիծը, Հետևանքը»: Նախքան երեխայի վարքի մասին կարծիք կամ հետևություն անելը պետք է խորապես

զննել և հետևել, թե ինչը դարձավ խթանիչ/trigger նման վարքագծի (սոցիալական համատեքստում կամ որևէ միջավայրում ձևավորված, անձի կամ առարկայի հետ կապված, գուցե կորցրել է մատիտը, գուցե ընկերն է հեղացրել, կամ նույնիսկ եղանակի կամ սենյակի ջերմաստիճանից է սրտնեղած)։Դրան հաջորդում է համապատասխան վարքագիծը: Հետևանքները տվյալ վարքագծի պատասխանն են ՝ դրական կամ բացասական, այսինքն գովում ենք կամ նախատում։Ինչպես օրինակ «Ապրես , լավ ես արել» կամ« Մի արա, դադարեցրու»: Նմանօրինակ հետազոտություն կամ դիտարկում անելով՝ կարող ենք հասկանալ տվյալ երեխայի վարքագծի պատճառները՝ կանխելով կամ խրախուսելով հետագա ընթացքը:

Ուզում եմ առանձնացնել նաև այն փաստը, որ դասարանի արդյունավետ կառավարման համար անպայման պետք է հաշվի առնել վարքագծի տվյալ դրսևորումը անհատական է, խմբային թե համադպրոցական: Ըստ այդմ կարելի է որոշել, թե ինչպես կանխել, միջամտել և կարգավորել այն: Եթե անհատական է այդ ոչ կառավարելի վարքագիծը (individual), ապա պետք է կանխել կամ միջամտել անհատական ձևով, եթե ամբողջ դասարանով է (classwide), ապա այդ միջամտությունը համադասարանական պետք է արվի, ընդհանուր դասարանի հետ զրուցելով կամ այլ միջոցներով, նախօրոք դասավորել կահույքը, երեխաներին հասկացնենք և հստակեցնենք մեր սպասելիքները: Եթե համադպրոցական է (schoolwide), ապա պետք է ընդհանուր դահլիճում ժողովի ժամանակ զրուցել և բացատրել նման վարքագծի դրսևորման անտեղի լինելը կամ սահմանել այն ընդհանուր սոցիալական կանոնները և ձևավորել ընդհանուր վարքագծային մշակույթ:



- Ստեղծել արդյունավետ աշխատանքային միջավայր՝ՏՀՏ գործիքների կիրառմամբ, տես ՝ ՏՀՏ–ի կիրառումը ուսումնական գործընթացում, մի շարք նմանատիպ գործիքների հղումներ կգտնեք այստեղ:
- Դասին կիրառել տարաբնույթ մեթոդներ և հնարներ, ինչպես նաև « Ուսումնաօժանդակ նյութեր »

Կարելի է դասագրքերը համալրել լրացուցիչ ուսումնաօժանդակ նյութերով, ինչպես նաև իրական կյանքին վերաբերող դիդակտիկ նյութերով:Զմոռանանք նաև արդի նյութական հզոր բազայի՝ համացանցի նյութերի բազմազանության մասին:

Համապատասխան լրացուցիչ նյութի ընտրությունը պետք է զգուշությամբ արվի՝ հաշվի առնելով և՛ տվյալ ազբյուրի հավաստիությունը և՛ սովորողների հետաքրքրության շրջանակը և՛ դասի թեմայի հետ համատեղելիությունը: Օժանդակ/դիտարկտիկ նյութերը պետք է լինեն նաև երկար պահպանվող, պարզ, հասկանալի, հեշտ ընթեռնելի: Դրանք կարող են պատրաստվել ուսուցչի կողմից, կամ ներբեռնվել համացանցից:

Ուզում եմ ներկայացնել խաղերի և խմբային աշխատանքների **5** տեսակ**,** որոնք ինքս ստեղծել եմ կամ ձեռք բերել, կամ երեխաների հետ պատրաստել և որոնք արդեն բազմիցս օգտագործել եմ տարբեր տարիքային խմբերի հետ աշխատելիս:

1–ին նկարում տեսնում ենք թվեր և աստղիկներ , խաղը կոչվում է «Գտիր համապատասխան թիվը», կարելի է և՛ անհատական և՛ խմբային խաղալ: Խաղի նպատակն է ամրապնդել 1–20 թվերը և գույները: Եթե խաղում են խմբով, ապա յուրաքանչյուր մասնակից վերցնում է որոշ քանակությամբ աստղիկներ, որոնց վրա արդեն կան անգլերեն բառեր (թվերը) և որոշակի ժամանակահատվածում արագ գտնում և տեղադրում է շրջանակի մեջ: Ավարտելուց հետո որևէ այլ մասնակից ստուգում է որևէ գույնի վրա տեղադրված թվերը, այսինքն համագործակցում են միմյանց հետ և միմյանց ստուգում (self/peer-assessment):



2-րդ նկարում կա սեղանի խաղ “Name your favourite…” պաստառը, խաղանիշներ՝ մրգերի տեսքով և խաղաքարեր, որոնք տեղադրվում են “ Start” հատվածում, մասնակիցները կարող են լինել տարբեր տարիքի , A2 մակարդակի իմացության համար շատ հետաքրքիր ընթացք կարող է ունենալ: Իդեպ, տվյալ խաղի

կանոնները մասնակիցներն իրենք կարող են որոշել, բայց առաջին կանոնը՝ « խոսում ենք և շփվում

բացառապես անգլերենով» պետք է պահպանվի:

3–րդ նկարը ժամացույցի մասին է, հարմար է և՛ 3–4–րդ տարրական դասարաններում և՛ բարձր տարիքային խմբի համար, այսինքն A1-A2 մակարդակի համար: Ծրարներում գտնվում են խառը բառեր, պետք է հստակ ժամանակահատվածում կազմեն նախադասություն, բայց ծրարում տեղադրված նկարի ցույց տված ժամը չի համապատասխանում տվյալ նախադասության ժամին, այսինքն համագործակցության և շփվելու միջոցով գտնում են իրենց կազմած նախադասության համապատասխան նկարը:



4–րդ նկարում տեսնում ենք փոքրիկ նկարներ (flashcards), որ պատրաստվել են երեխաների և համացանցի օգնությամբ: Նպատակն է զարգացնել մասնագիտությունների և աշխատավայրերի մասին բառապաշարը: Կարող են խաղալ և սեղանի և մագնիսական գրատախտակի վրա, քայլ 1 ՝գտնել մասնագիտությունը և աշխատավայրը, քայլ 2՝ կազմել նախադասություն “The postman works in the post office”: Քայլ 2–ով արդեն ամրապնդում ենք ժամանակածևերի մասին գիտելիքը:

Իհարկե չենք սահմանափակվում միայն այս օրինակներով և վերը նշված ֆայլերով: Յուրաքանչյուր խաղ և խմբային աշխատանք պետք է նպատակային լինի, հասանելի, իրատեսական և իրագործելի ՝ իմացության տվյալ մակարդակի համար,«խոսում ենք և շփվում բացառապես անգլերենով» կանոնը պետք է պահպանվի և կապահովվի դասարանի արդյունավետ կառավարումը՝ հետաքրքիր դարձնելով դասի յուրաքանչյուր րոպեն:

Մեկ այլ հետաքրքիր խաղ, որն իմ կարծիքով շատերն են կիրառում, SIMON SAYS խաղն է: Խաղը կատարվում է անգլերենով, նպատակն է ստուգել և ամրապնդել Body Parts (մարմնի մասերը) թեմայի իմացությունը խաղի միջոցով: Երեխաները ուսուցչի հետ կազմում են շրջան, ուսուցիչը հրահանգներ է տալիս, և երեխաները պետք է լսեն SIMON SAYS արտահայտությունը և կատարեն հրահանգը, խաղից դուրս է մնում այն մասնակիցը, ով կատարել է հրահանգը՝ առանց ուշադրություն դարձնելու SIMON SAYS արտահայտությանը: Տես՝ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՅԱՆԿ, էջ **27**

Զարգացող տեխնոլոգիաները մեզ անընդհատ առաջ են մղում մտածելու և ստեղծելու ավելի հետաքրքիր կրթական միջավայր մերօրյա սովորողների համար: Այս առումով խաղային մոտեցումը կարող է բարենպաստ և նպատակային լինել, եթե ճիշտ կազմակերպվի: Տարրական դասարաններից սկսած երեխաները խաղի միջոցով սովորելու բնական դրսևորում ունեն, որը սահուն տանում է նրանց անսահման հետաքրքրասիրությունը բավարարելու և սովորելու ցանկությանը: Իհարկե սա տարբեր է, և հաճախ անհատական դրսևորում է ստանում:

Խաղի ընթացքում սովորելը արդյունավետ կլինի եթե խաղը ՝

- ★ լինի ուրախացնող
- ★ իմաստալից և նպատակային
- ★ ուղղակիորեն ներգրավող և աշխուժացնող
- ★ պարբերական կամ հաճախակի կրկնվող
- ★ հասակակիցների հետ իրական շփում ապահովող:

Նմանատիպ խաղերը կարող են լինել և առկա (ինչպես վերը նշված խաղերի *4* տեսակները) և առցանց: Առկա խաղի օրինակներ շատ կարելի է բերել, «Գտիր ինչն է փոխվել», « Աչքերը կապած՝ պարկից հանիր և զուշակիր» և այլն:

Առցանց խաղի օրինակներից է՝

տես՝ BRITISH COUNCIL GAMES/PRIMARY

Կամ մեկ այլ խաղ, որն ուսուցանում է ածականի շարահյուսական կարգը նախադասության մեջ, այն հարմար է 9–րդ դասարանի համար(տես՝ Adjectives):

Հետևյալ խաղը ուսուցանում է գույները,և զարգացնում է երևակայությունը, և երեխաները կարող են շփվել միմյանց հետ անգլերենով, նույը կարելի է նաև անել մատիտներով և թղթով՝ տալով տարբեր հանձնարարություններ:

Այն շատ հարմար է 3–4–րդ դասարանների համար: Գույնզգույն LEGO–ները կամ մատիտները և անսահման երևակայությունը կապահովեն ստեղծելու տարատեսակ և նպատակային խաղեր:

- Անհատական–խմբային–ամբողջական դասարանային աշխատանքների հստակ տարաբաժանում կատարել

  Խմբային աշխատանքը հնարավորություն է տալիս

  - ստեղծել ավելի ազատ և անկաշկանդ համագործակցող կրթական միջավայր,
  - փոխում է դասի ընթացքը՝ ուսուցչից ուշադրությունը կենտրոնացնելով տվյալ առաջադրանքի կամ վարժանքի վրա
  - թիմային աշխատանքում համագործակցելու և հաղթանակի զգացում ունենալու հնարավորություն
  - թույլ է տալիս ուսուցչին ավելի ազատ վերահսկել և օգնել աշխատանքը:

- Ի՞նչ պետք է հաշվի առնել խմբային աշխատանքի համար ցույց է տրվում նկարով՝ **Grouping strategies/OPEN, Rance-Roney (2010)**



Տեսակներից կարելի է նշել՝ ստեղծիր և միավորիր, Բոնոյի վեց գլխարկները, *(Six Thinking Hats),* ***5*** կենտրոններ՝ Բացահայտողների կենտրոն , Հետազոտողների, Ստեղծագործողների, Գրավոր աշխատանքի կենտրոններ, Թեյախմություն *(Tea Party method* զույգերով–շրջանաձև զրույց*),* Չորս անկյունների քննարկում (disagree, agree, strongly agree, strongly disagree), jigsaw(խմբերը նույն տեքստը լսում են տարբեր պատմողների անունից, հետո քննարկում և ստանում միասնական տեքստ), Jumble activity,Transformation drills, Mind maps և այլ համագործակցային ուսուցման մեթոդներ և վարժանքներ:

Խմբային աշխատանքների տեսակները բազմազան են և պահանջվում է լինել վառ երևակայության տեր կամ բացահայտել նաև այլ տեսակներ՝ հետևելով առաջատար ուսուցիչների փորձին, բայց երբեմն հարց է առաջանում, թե ինչպե՞ս բաժանել խմբերի: Խմբերի կարող ենք բաժանել փայտիկների օգնությամբ, դրանք կոչվում են **Popsicle sticks** կամ պաղպաղակի փայտիկներ, որոնց վրա գրված են սովորողների անունները և նրանք կամայական են բաժանվում խմբերի: Մեկ այլ վառ օրինակ է տարբեր գույների թերթիկների միջոցով, որոնք ուսուցիչը նախօրոք փակցնում է նրանց սեղանների վրա: Այլ հետաքրքիր օրինակներ առաջարկում եմ գտնել ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ բաժնից, էջ 21, որոնց ես հանդիպել եմ How to teach speaking(British Council) առցանց դասընթացին մասնակցելիս և օգտակար նյութերին ծանոթանալիս (**Different ways of grouping,students in the classroom) :**

«Ծուղակները»

Երբեմն հնարավոր է հեշտությամբ կորցնել դասարանի կառավարման վերահսկողությունը՝ պետք է գտնել աշխատող մեթոդ արագ վերահսկողությունը վերականգնելու: Առաջարկում եմ հետևյալ տարբերակները, եթե

- հնարավոր չի լինում ամբողջովին լսել անգլերեն խոսքը խմբերում, երբեմն սկսում են խոսել հայերեն ՝պետք է անուղղակի ձևով անձնապես մոտենալ յուրաքանչյուր խմբին և ուղղորդել անգլերենով , առաջարկել օգնություն, եթե շեղվել են թեմայից
- աշխատանքային «աղմուկը» վերածվում է վեճի կամ բարձրածայն գոռոցների՝ պետք է տեղափոխել ավելի աշխույժ խումբը կամ վերահսկել տվյալ խումբը ցածրածայն հորդորներով
- մի խումբը մյուսից արագ է ավարտում՝ դնել հաստակ ժամանակի սահմանափակում

Արդյունքում ստանում ենք ավելի հեշտ կառավարվող դասարան, համերաշխ և հետաքրքրված ձևով զբաղված խմբային աշխատանքով :

Կենսական մեծ նշանակություն ունի սովորողների հետ հարաբերությունների ստեղծումը: Դասարանի արդյունավետ կառավարման համար պետք է շատ լավ ճանաչել սովորողներին, ուսումնառության թույլ և ուժեղ կողմերը՝ վեր հանելով նրանց հետաքրքրասիրությունները և պարզել ձգտումների շրջանակը: Սա կօգնի ձեռք բերելու վստահություն սովորողի աչքերում և ուսումնառության ընթացքում ոչ միայն օգտակար կլինի , այլև դրական ազդեցություն կթողնի սովորողի անձնական աճի վրա: Ի վերջո մենք բոլորս նախքան ուսուցիչ լինելը եղել ենք սովորող, և քայլելով մերօրյա սովորողի հետ համընթաց՝ գիտելիքի սերմանումից և տեղեկույթի փոխանցումից զատ պետք է նաև ստեղծենք փոխհամաձայնեցված, համագործակցային և վստահության վրա

հիմնված կրթական միջավայր: Իսկ ինչպե՞ս ճանաչել սովորողին: Պետք է հաշվի առնել ուսումնառության և մասնակցության անհատական ոճերը:

★ Կրթության փորձագետ Նիլ Ֆլեմինգը սովորողների ուսումնառության անհատական ոճերը ուսումնասիրելով (այն կոչվում է **VARK** մոդել **Visual, Auditory, Reading/Writing Preference, and Kinesthetic**) ճշում է, որ տեսողական սովորողները (տես՝ տեսողական սովորողները) նախընտրում են նյութը տեսնել , նախապես սովորելու համար: Լսողական սովորողները ավելի շատ ուշադրություն են դարձնում լսողական վարժանքներին, երգերին,«լսել–կրկնել» վարժանքներին: Զգայական սովորողները գործի են դնում իրենց զգայարանները՝ հասանելի տեղեկությունը ընմբռնելու համար և պետք է կատարեն, շոշափեն և զգան հնարավորին չափ:

★ Մասնակցելով TESOL Methodology Summer 2023 առցանց դասընթացին , կազմակերպված Online Professional English Network (OPEN)–ի կողմից ՝ հետևություններ արեցի և փորձ ձեռք բերեցի սովորողների ուսումնառության անհատական ոճերը ուսումնասիրության մեջ, որը մեծ սիրով ուզում եմ կիսվել նաև իմ այս աշխատանքի մեջ: Հետևություն անելով ուզում եմ ճշել, որ կան ոչ միայն սովորողների ուսումնառության անհատական ոճեր, այլ նաև ուսումնառության գործընթացում մասնակցության անհատական ոճեր, ինչպիսիք են խնդրի վրա կենտրոնացած **Task-oriented students**, ովքեր ամենարագն են ավարտում առաջադրանքը, սոցիալական/շփվող **Social students,** ովքեր ավարտում են առաջադրանքը, բայց առաջնահերթությունը տալիս են մյուսներին օգնելու կամ պարզապես շատախոսում են, և վերջապես ոչ–անկախ սովորողներ, **Dependent students,** ովքեր միշտ ուսուցչի օգնության կարիքն ունեն, տես՝ Introduction to Learning Styles, ©2018 by University of Maryland, Baltimore County (UMBC)

- Այս ամենով հանդերձ, երբ հաշվի ենք առնում սովորողների ուսումնառության նախընտրած ոճերը, մասնակցության ոճերը և դասապրոցեսը կազմակերպում համատեղելով և մեկտեղելով տարբեր ոճերի կարիքները բավարարող մեթոդներ, ապա կհաջողենք ոչ միայն դասարանի արդյունավետ կառավարման մեջ, այլ նաև նպատակային կօգտագործենք մեր ժամանակը և նյութի հաղորդումը կծառայի իր նպատակին:
- Պետք է հաշվի առնել ևս մեկ գործոն, որը շատ լավ երևում է ներբևի նկարում՝ ցանկացած ոճի նախընտրության մեջ կարևոր է իրագործումը, սովորածի կիրառումը ՝ զարգացնելով տարբեր հմտություններ և կարողություններ, դրանք դարձնելով կարողունակություններ:



- ՈՒսուցչի ամենօրյա գործողությունները կանոնավոր կերպով կատարել

Երեխաների մեծ մասը հաճախ են ցանկանում իմանալ, թե ինչ ակնկալիք և սպասումներ ունի ուսուցիչը իրենցից, որպեսզի համապատասխանաբար պատրաստ լինեն և հարմար զգան իրենց դասարանում: Սա կարող է նպաստել նաև նրան, երբ լինի այնպիսի իրավիճակ , եթե ուսուցիչը հանգամանքներից ելնելով մի փոքր ուշացել է, ապա երեխաները իմանան իրենց անելիքը և ինքնուրույն զբաղվեն իրենց գործով:

Եթե դասարանի կառավարման ճիշտ ռազմավարություն է ընտրված և ակնկալիքներն ու առաջադրանքները հստակեցված են, ապա դա կտա և՛ ուսուցչին և՛ սովորողին ապահովության զգացում, անպայման դրական ազդեցություն կունենա նրանց մոտիվացիայի և աշխատանքի արդյունավետության վրա: Դրա համար ուսուցչի դերը կայանում է նրանում, որ պարզ և որոշակի հրահանգ/առաջադրանքներով երեխաներին առաջնորդի դեպի տեղեկույթի ստացումը, գիտելիքի և հմտությունների ձեռք բերումը՝ ունենալով կանոնակարգված ամենօրյա գործողություններ, որն էլ կկանխարգելի և հնարավորին չափ կնվազեցնի դասարանի անկարգությունները:

- Մնալ հանգիստ և կենտրոնացած

Ինչպես է ուսուցիչը իրեն դրսևորում դասարանում, նույնպես կարող է ուղղակիորեն ազդել և արտացոլվել երեխաների վարքում: Երեխաները հմտորեն , երբեմն նաև կամա թե ակամա կրկնօրինակում են իրենց ուսուցչի վարքը, ժեստերը, խոսելաոճը: Եթե ուսուցիչը հանգիստ է և կենտրոնացած, ապա երեխաները իրենց լարված չեն զգում, նույնպես կենտրոնանում և հասկանում են ուսուցչի հրահանգները: Տես՝ Օգտագործված գրականության ցանկ **(Effective classroom management),** էջ **27**

- Խրախուսել և աջակցել սովորողներին և հաճախակի ժպտալ

Դասարանի կառավարման ռազմավարության կետերից մեկն է բոլոր սովորողներին, առանց խտրականության, օգնել, խրախուսել և աջակցելը, ինչպես նաև չկորցնելով հումորի զգացումը: Երեխաների վարքը երբեմն կարող է մարտահրավեր լինել, նման պահերին պետք է դրսևորել զսպվածություն և որոշ դեպքերում իրերին նայել նաև հումորի տեսանկյունից՝ հաճելիորեն վայելելով նրանց փոքր չարաճճիությունները: Տվյալ մոտեցմամբ կարելի է ստեղծել չափավոր մտերմիկ միաժամանակ ջերմ մթնոլորտ՝ դասարանի կառավարումը դարձնելով ավելի հեշտ և հաճելի: Երբեմն լարված իրավիճակը կարող է փոխել մի հետաքրքիր կատակը, բայց դա պետք է արվի մեծ զգուշությամբ՝ հաշվի առնելով տարիքային և հոգեբանական բոլոր առանձնահատկությունները:

- Դասին ներգրավել բոլոր աշակերտներին,

Կարևորագույն նպատակներից է նաև սովորողին ուսումնառության մեջ ներգրավելը, որը և պահանջում է ուշադրություն դարձնել հետևյալ սկզբունքներին՝

1. աշակերտներին ավելի արագ և ավելի արդյունավետ են սովորում, երբ ակտիվորեն ընդգրկվում են ուսումնառության գործընթացում,
2. սովորելու ակտիվ ընթացքը խթանելու համար անհրաժեշտ է հաճախակի գործնական աշխատանք կազմակերպել, հարցեր տալ, որպեսզի սովորողն սկսի մտածել,
3. ժամանակ առ ժամանակ քննարկման մեթոդներ օգտագործել.
4. ստեղծել արդյունավետ աշխատանքային միջավայր՝ ՏՀՏ գործիքների կիրառմամբ:

Դասարանի արդյունավետ կառավարման համար պետք է հաշվի առնել նաև դասարանի կառավարման 3 ոճերը:

- **Դասարանի կառավարման 3 ոճեր**

  Ըստ հետազոտողների կան դասարանի կառավարման 3 ոճեր՝

  1. Ժողովրդավարական
  2. Ավտորիտար
  3. Լիբերալ

1. Դասարանի կառավարման ժողովրդավարական ոճ, այս դեպքում պետք է հաշվի առնել հետևյալ կետերը՝

- Ուսուցիչ –Աշակերտ Իրավունքներ
- Դասի արդյունքի հեղինակ և պատասխանատու
- Ուսուցիչը լսում է յուրքանչյուր աշակերտի կարծիքը,
- Ուսուցիչը տալիս է նրանց ինքնուրույնության, ինքնադրսևորման հնարավորություն,
- Ուսուցիչը հոգում է դասարանի բոլոր սովորողների ներգրավվածության մասին,

- Սովորողի սխալի համար ոչ թե պատժում են, այլ փորձում են օգնել թե՛ ուսուցիչը, թե՛ ընկերները:
- Ուսուցչի և սովորողների կողմից մշակվում են վարքագծի կանոններ՝ իրավունքներ և պարտականություններ, որոնց պետք է հետևեն սովորողները:

2. Դասարանի կառավարման ավտորիտար ոճին բնորոշ են՝
   - Ուսուցիչը սահմանում է բոլոր կանոնները,
   - Դասն ընթանում է ըստ ուսուցչի մշակած ծրագրի,
   - Նրա հիմնական գործառույթը գիտելիքի փոխանցումն է,
   - Վարքի վերահսկումը ուսուցչի կողմից բարձր է և աշակերտը պարտավոր է ենթարկվել նրան:

3. Դասարանի կառավարման լիբերալ ոճին բնորոշ են՝
   - Դասի օրենքներն ու կանոնները չեն գործում,
   - Սովորողների վարքի վերահսկումը շատ ցածր մակարդակի է,
   - Ուսուցիչը բարյացակամ ու ընկերական հարաբերություններ ունի սովորողների հետ:

Հետազոտությունները ցույց են տվել, որ դասարանի կառավարման ամենաարդյունավետ ոճը ժողովրդավարականն է: Երբ ուսուցիչն աշակերտների համար վստահություն ներշնչող անձ է, միևնույն ժամանակ՝ գործընկեր, զրուցակից, աշխատակից, իսկ սովորողները՝ ուսումնական գործընթացի մասնակից և համահեղինակ, ապա նման պայմաններում քիչ են լինում կարգապահական խախտումները և դասարանը դառնում է ավելի կառավարելի: Երբ դասին յուրաքանչյուր աշակերտ իր դերն ունի, դրանով նա ստանձնում է խմբի ընդհանուր նպատակին հասնելու պատասխանատվություն, զարգանում է խմբային պատասխանատվության զգացումը: Կարևոր է, որ ուսուցիչը խրախուսի սովորողների ինքնուրույն գործունեությունը, սովորողներին հնարավորություն տա՝ արտահայտել իրենց կարծիքը և հաշվի առնի ու լսի մեծամասնությունից տարբերվող մտքերը: Այդ ժամանակ դժգոհելու և բողոքելու առիթներ քիչ կլինեն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՈՒսումնասիրությունների և հետազոտությունների արդյունքում հանգել եմ հետևյալ եզրահանգումներին.

- Թեման խիստ արդիական է, լուծման ուղիները պետք է լինեն շարունակական և ժամանակին համահունչ:

- Ուսուցիչը պետք է դասարան մտնի դասի հստակ պլանով:

- Տարեսկիզբը պետք է սկսել կարգապահական կանոնների պահպանմամբ:

- Պետք է լինել գործընկեր, զրուցակից, աշխատակից, իսկ սովորողները՝ ուսումնական գործընթացի մասնակից:

- Պետք է բազմակողմանի ճանաչել սովորողին՝ եզրակացնելով նրա վարքագծի պատճառները :

- Հաշվի առնել յուրաքանչյուր սովորողի ուսումնառության ոճերը, ինչպես նաև ուսումնառության գործընթացում մասնակցության անհատական ոճերը:

- Դասը դարձնել հետաքրքիր չափով մատչելի՝ օգտագործելով ուսումնաօժանդակ նյութեր և հիմնվելով դասագրքի նյութերի վրա:

- Հաճախակի անդրադառնալ խաղերի մեթոդին՝ ծառայեցնելով դրանք ըստ նպատակի, տարիքի, իմացության աստիճանի, ուսումնառության և մասնակցության նախընտրած ոճի:
- Եթե դասարանի կառավարման ճիշտ ռազմավարություն է ընտրված և ակնկալիքներն ու առաջադրանքները հստակեցված են, ապա դա կտա և՛ ուսուցչին և՛ սովորողին ապահովության զգացում, դրական ազդեցություն կունենա նրանց մոտիվացիայի և աշխատանքի արդյունավետության վրա:
- Պետք է հաճախակի և ըստ էության ժպտալ՝ ստեղծելով միաժամանակ վստահելի, ապահով և իմաստալից կրթական միջավայր:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- «Նախագծային ուսումնառության կազմակերպում և կառավարում» դասընթացին մասնակցելու ՀԱՎԱՍՏԱԳԻՐ **(2023)**
- **Certificate/How to teach speaking (2023)**
- **Certificate /Online Skill for remote teaching (2023)**
- **Certificate/CLASSROOM MANAGEMENT (2023)**
- **Understanding resources British Council TeachingEnglish**

- Understanding activities and classroom space for primary, British Council TeachingEnglish
- Understanding language use and instructions for primary, British Council TeachingEnglish
- Working in pairs and groups British Council TeachingEnglish
- Effective Classroom Management Olivia Hammerschmidt/video (2020)
- Utilizing Proximity to Manage Classroom Discipline and Behavior, Sarah Gapp (2017)
- Teacher positioning in the classroom British Council TeachingEnglish
- Jigsaw/Understanding language practice activities British Council TeachingEnglish
- Neil Fleming's VARK model of Student Learning, (August 2020)
- Introduction to Learning Styles/OPEN, ©2018 by University of Maryland, Baltimore County (UMBC)
- Learning Strategies /OPEN, ©2018 by University of Maryland, Baltimore County (UMBC)
- Grouping strategies/OPEN, Rance-Roney (2010)
- Student-Centered Teaching in Large Classes with Limited Resources/OPEN
- Different ways of grouping, Mary Dean (August 22, 2019)
- Զումախմություն 2022 -Դասարանի կառավարում EduArmenia
- Թալին Պրատ EduArmenia (2022)
- Դասարանի կառավարման ռազմավարություններ Զումախմություն (2021-22) Վարդինե Թագակչյան
- Դասարանի և դասաժամի կառավարում | Նարինե Սիրականյան #EdcampArmenia #ՈՒսուցիչըԿարևորէ Paradigma Educational Foundation 2020
- SIMON SAYS Արագած ճամբար, Հանիվան, (2021), A+ skills լեզվի կենտրոն/ համագործակցություն
- Դասի պլանավորում, Օրինակելի դասապլան 2023–24, Դասի պլան EduArmenia 2023